

«ԳՈՅԱՍՏՐՏԸ» ՄԵՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՄԵՆԱՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՀԵՌՈՒՄՏԱԾՐԱԳՐԵՐԻՑ Է. ՍԵՆՈՐ ՀԱՄԱԹՅԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

-Ու՞մ գաղափարն ու նախաձեռնությունն էր «Գոյամարտ» հեռուստածրագրի ստեղծումը, ե՞րբ հեռարձակվեց առաջին թողարկումը:

-1993թ. հուլիսին, լինելով Արցախի հեռուստառադիոպետկոմի աշխատակից, Արցախի Ինքնապաշտպանության կոմիտեի նախագահի ներկայացուցչի կողմից առաջարկություն ստացա ձևավորել ինքնապաշտպանության ուժերի լրատվական ծառայություն: Համաձայնությունս տալով՝ հանդիպեցի ԻՌԻԿ նախագահ Սերժ Սարգսյանի հետ: Մինչ ես աշխատում էի ծառայության ստեղծման ծրագրային փաստաթղթերի վրա, Ս.Սարգսյանը նշանակվեց ՀՀ պաշտպանության նախարար և տեղափոխվեց Երևան: ԻՌԻԿ լրատվական ծառայության ստեղծման հրամանը ստորագրվեց 1993թ. սեպտեմբերի 1-ին՝ Ինքնապաշտպանության ուժերի հրամանատար Սամվել Բաբայանի կողմից: Նույն թվականի հոկտեմբերի 17-ին եթեր հեռարձակվեց «Գոյամարտ» հեռուստածրագրի անդրանիկ թողարկումը:

-Ինչո՞ւ «Գոյամարտ», ո՞վ էր անվանման հեղինակը: Ի՞նչ հաճախականությամբ էր այն եթեր հեռարձակվում:

-Զգիտեմ Գեղամ Բաղդասարյանը հիշու՞մ է, որ այդ անվանման հեղինակն ինքն է: Բայց ես հիշում եմ, որ ծրագրի նախապատրաստական աշխատանքների ընթացքում, հանդիպելով նրա (այդ ժամանակ Գեղամը, եթե հիշողությունս չի դավաճանում, «Ազատ Արցախ» թերթի խմբագիրն էր) հետ, խորհրդակցեցի և հենց իր առաջարկով ծնվեց ապագա հեռուստածրագրի անունը:

-Ովքե՞ր էին ընդգրկված ստեղծագործական խմբում, ինչպե՞ս համալրվեց այդ խումբը:

-Սկզբում աշխատանքներին ընդգրկված էի ես՝ որպես լրագրող և Վարդգես Ուլուբաբյանը՝ որպես հեռուստառեժիսոր և, միաժամանակ, օպերատոր: Այնուհետև մեզ միացան լրագրող Ռուդոլֆ Մարտիրոսյանը և օպերատոր Վադիմ Սկրտչյանը:

-Ի՞նչ խնդիրների առաջ եք կանգնել ծրագիրն իրականացնելու ընթացքում: Ի՞նչ կերպ հնարավոր եղավ հաղթահարել առկա խնդիրները:

-Խնդիրները բաղկացած էին երկու մասից՝ ստեղծագործական և տեխնիկական: Ստեղծագործական մասով դժվարությունները պայմանավորված էին նրանով, որ մենք չունեինք ռազմական ոլորտում քարոզչական աշխատանք իրականացնելու համապատասխան փորձ և ունակությամբ: Իսկ տեխնիկական առումով դժվարությունը՝ անհրաժեշտ տեխնի-

կական միջոցների բացակայությունն էր:

-Ի՞նչ խորագրեր է ունեցել «Գոյամարտ»-ը:

-Թերևս, այսօր չկարողանամ վերհիշել բոլորը, բայց դրանցից յուրաքանչյուրը կոնկրետ հասցեատեր ուներ: Փորձեմ հիշել դրանցից մի քանիսը. «7 օր առաջնագծում», «Հիշենք և մեծարենք», «Փորձադաշտ», «Հերոսները» և այլն:

-Բացի Արցախի հեռուստատեսությունից, ուրիշ ո՞ր հեռուստաալիքներով էին հեռարձակվում «Գոյամարտ»-ի թողարկումները:

-Ամենշաբաթյա պարբերականությամբ առանձին խորագրով եթեր էր հեռարձակվում Հայաստանի հանրային հեռուստատեսության «Արցախյան տարեգրություն» հաղորդաշարով, որի հեղինակն էր Ռեմալ Սիրզոյանը: 1996թ. ացկացված սոցհարցումների արդյունքում, «Գոյամարտ»-ի սյուժեների, «Արցախյան տարեգրությունը» ՀՀ հեռուստադիտողների շրջանում ճանաչվել է ամենառեյտինգայինը:

-Հետագայում ի՞նչ փոփոխություններ են կատարվել ծրագրում՝ պարբերականություն, ձևաչափ, դիզայն և այլն: Քանի՞ թողարկում է եղել մինչև 2020 թվականի աշնանային պատերազմը:

-«Գոյամարտն» անցել է ինքնակատարելագործման երկար ճանապարհ և ունեցել այն կարևորը, որը կոչվում է «ճանաչում»: Այն եղել է Արցախի հեռուստատեսության համար կադրերի պատրաստման դարբնոց: Դրանում համոզվելու համար բավական է աչք անցկացնել հեռուստատեսության հաստիքապաշտոնային ցանկը...Ինչ վերաբերում է թողարկումների քանակին, ապա դա շուրջ 2000-ի է հասնում: Բայց ավելի ճիշտ թիվը Ձեզ կարող են տալ ՊԲ տեղեկատվության և քարոզչության բաժնից:

-Արդյո՞ք պահպանվում է «Գոյամարտ»-ի ամբողջական արխիվը: Մատչելի՞ է այն գիտական ուսումնասիրությունների համար:

-2020թ. օգոստոսի 7-ին, երբ ես թողեցի ՊԲ ՏՀՀԿ բաժնի պետի պարտականությունները, Ձեզ հետաքրքրող արխիվը լրիվությամբ պահպանվում էր և դրանում, իրոք, կար առելի ծավալի ուսումնասիրության ենթակա նյութ: Դիմեք բանակի հրամանատարությանը և օգտվեք...

Հարցազրույցը՝
Սվետլանա ՊԵՏՐՈՍՅԱՆԻ,
«Լրագրություն» 3-րդ կուրս



Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՂ
№ 4
ՄԱՅԻՍ
2023

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԱՍԵՐ
ՔԱՂԵԼԸ ԿԱՐԵՎՈՐ Է



Հայրենիքն ազգի բնօրրանն է, իսկ հայ ժողովուրդը՝ պատմության հետիոտն անցորդ: Այո, Արցախահայաստանն այն հայրենիքն է, որտեղ ժողովրդավարությունն ու ղեկավար ուժը պետք է ճիշտ և արդյունավետ կառավարի համազգային ներուժը: Իսկ արդի պայմաններում բոլոր գործառույթները պետք է ուղղված լինեն այդ խնդիրների լուծմանը: Պետք է վերագործարկել պետությունն ու ազգը՝ հանուն երկրի տնտեսական վիճակի կայունացման, ապաշրջափակման ու կենսականության ամրապնդման:

Պատմության մեջ հայը դարավոր հաղթանակներ է կերտել՝ պետական մտածողության բաղադրիչի և սկզբունքային հայեցակարգի շրջանակներում

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Արդ՞ի տնտեսագիտության ֆակուլտետում «Կառավարում» 3-րդ կուրսի ուսանողների և դասախոս Մարիաննա Խաչատրյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է միջոցառում: Նպատակը՝ դասընթացից ստացած ուսանողների տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունը զարգացնելը:

Ուսանողները ցուցադրել են իրենց կողմից վիրտուալ ստեղծված կազմակերպության՝ «Ազաթ»-ի 10-ամյա գործունեությունից կարևոր դրվագներ, կազմակերպությունը գրանցելու, կառավարելու և այլ առանձնահատկություններ:


կյանքի կոչելով բոլոր օգտակար և շահավետ գաղափարները:

Սարդարապատի ճակատամարտ: 1918 թ. մայիսի 21-29: Հայկական կանոնավոր զորամասերի, աշխարհագրի և Արևելյան Հայաստան ներխուժած թուրքական զորաբանակի միջև: Սարդարապատի հերոսամարտը պատմության մեջ մտավ «20-րդ դարի Ավարայր» անվամբ: Հայոց աշխարհում ծագած բոլոր պատերազմներն ու հաղթանակներն ինքնանպատակ չէին: Եվ պատահական չէ, որ Ավարայր- Սարդարապատը հայոց վերածննդի սկիզբն էր, սեփական ուժերին հավատալու և հզոր Հայաստան ստեղծելու ճանապարհին կարևորագույն ռազմավարական և հոգեբանական հաղթանակը: Պատահական չէ ասված՝ «Հայրենիքն ազգի կամ էթնոսի այն բնօրրանն է, որտեղ այն ձևավորվել է իր լեզվով, մշակույթով ու կենցաղով, հասարակական և պետական կառուցվածքով, արարել ու սերնդափոխել է, ստեղծել և հաջորդ սերունդներին է ժառանգել քաղաքակրթական արժեքներ»:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ



Ներկա էին ֆակուլտետի դեկանը, դասախոսները, ովքեր կարևորել են միջոցառման դերը՝ ուսանողների մասնագիտական հմտությունների զարգացման տեսանկյունից:



«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍՈՒՆՅԱՆ
Համարի պատասխանատու՝
Անժելա Շահանգ,
լրագրություն 3-րդ կուրս

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գրչի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

ԱՐՑԱԽ՝ ԱՊՐԵԼՈՒ ԲԱՆԱԶԵՎ

Արցախ... Ինչքան ցավ ու տառապանք, բայց միաժամանակ հաղթական շունչ կա այս աստվածային բառում: Արցախը շատ հին պատմություն ունի: Որպես Հին Հայաստանի անբաժանելի մաս հիշատակվում է ուրարտական սեպագրություններում: Արցախի տեղի և սահմանների մասին տեղեկություններ է հաղորդում հույն աշխարհագետ Ստրաբոնը: Նա Արցախը ճանաչում է որպես Մեծ Հայքի նահանգներից մեկը՝ Օրխիստինա (Արցախ) անունով: Երկրի սահմանների հյուսիսում Կուր գետն է, հարավում՝ Երասխը: Արցախը, ինչպես վկայում է աշխարհագետը, արտահանում էր մեծաքանակ պատերազմական ձիեր:

Ըստ ժողովրդական ստուգաբանության՝ «Արցախ» նշանակում է Առանի ծառաստան: Ավանդության համաձայն՝ Առանը հայոց Վաղարշակ արքայի կողմից նշանակված նախարարն էր՝ Սիսակյան տոհմից: Առանը պատկանում էր Հայկ Նահապետի զարմին, ուստի և միջմադարյան պատմիչները Արցախի իշխաններին կոչում էին «Հայկազանք»: Արցախի մասին կարելի է անվերջ խոսել, որովհետև Արցախն ու արցախցին երկար ու փշոտ ճամփա են անցել:

Արցախը իմ դարավոր տունն է, իմ պապերի օրրանը, իմ չքնաղ երկիրը, ուր աշխարհի տարբեր անկյուններից գալիս են՝ ծանոթանալու նրա գեղատեսիլ վայրերին, վայելելու չնաշխարհիկ երկրամասի գույնզգույն տեսարանները, ծաղկած այգիների անուշիկ բույրը, զմայլվելու շրջապատող հրաշք անտառներով, սպիտակափառ լեռներով, սքանչելի մարգագետիններով: Սա մեր երկիրն է, որտեղ արարել ու կայացել են մեր մեծերը:

Սիրում են քեզ, իմ Արցախ, սիրում են քեզ, իմ անառի՛կ ամրոց, որովհետև քաղցր մոր պես ինձ սնում ես, ու ես հասակ են առնում քո գրկում: Թող հնչի իմ խոսքը աշխարհից աշխարհ, թող ողջ աշխարհը ճանաչի քեզ, որովհետև ուղին մեր անշեղ է, գործը մեր՝ արդար: Որդիներդ անվախ են, անձմեր, ունես հերոս զավակներ, որոնք սրբագործեցին քո



պատմությունը: Քո որդիները պաշտում են քեզ, սիրում կյանքից առավել, նրանց հերոսական ոգին մղվում է ռազմի դաշտ՝ պաշտպանելու անգին հայրենիքը: Իմ Արցախի մասին ուզում են պատմել ու պատմել, որ ամբողջ աշխարհն իմանա: Եղեմական դրախտավայր է իմ չնաշխարհիկ Արցախը: Մեր փոքրիկ բուրաստանում ալ վարդեր, գույնզգույն մեխակներ, շուշաններ շատ կան, և այս դաշտավայրը թանկ է մեզ համար, քանզի նրա յուրաքանչյուր թիզ հող ներծծված է մեր հերոս տղաների արյունով: Մեր արծիվ տղաները սեփական արյունով են «ջրել մեր ծառերը, իսկ արյամբ ջրված ծառերը երբեք չեն չորանա»:

Իմ հայրենիքը պիտի լինի ազատ ու անկախ, այն նաև իմ գյուղն է, իմ համալսարանը, այն հայերեն դոդաճոճող իմ Գանձասարն է, հորդառատ Թարթառն ու Խաչենն է, որոնք իրենց ափերին կարծես պատմում են դարերից եկած պատմություններ, եղելություններ, իսկ երբ հորդառատ անձրևներից վարարում են, հեռվից նայողին կթվա, թե նրանք բողոքում են թշնամիներից, որոնք խանգարում են մեր հանգիստը, ուզում կեղծիքի, խավարի միջոցով պղծել մեր մաքուր պատմությունը, խաբել իրենց ժողովրդին, աշխարհին, տիրանալ ուրիշի պատմությանը, ունեցվածքին, բայց դա նրանց չի հաջողվի, որովհետև «ճշմարտությունը հիվանդանում է, բայց չի մահանում»:

➔ 3

2 ➔ Տարիներ շարունակ Ադրբեջանը դաժան պայքար է մղում Արցախի դեմ: Ուզում է ջնջել հայի սուրբ ամուլը, ուզում է տիրանալ նրան, ինչն իրենը չէ: Անարդար պատմությունը կրկնվում է: Այսօր էլ Ադրբեջանը մեր դեմ կիրառում է հայասպան, հայակործան քաղաքականություն՝ շրջափակման մեջ պահելով հարյուր քսան հազար անմեղ բնակչի: Թաքնվելով «բնապահպանի» կեղծ դիմակի տակ՝ նրանք ուզում են էթնիկ զտման ենթարկել մի ողջ ժողովրդի, նրանց նպատակը Արցախը վերջնականապես հայաթափելն է: Ադրբեջանը խախտում է եռակողմ համաձայնագրի դրույթները, մեզ գրկում ապրելու իրավունքից: Այսօր ավելի քան հարյուր օր է, որ նրանք փակել են Արցախի կյանքի ճանապարհը, Արցախը Հայաստանին ու արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհը: Ադրբեջանը այսօր լեզալիզացնում է իր պիղծ ներկայությունը մեր սուվերեն տարածքում: Մեր վիճակն օրհասական է, այսօր մենք կանգնած ենք լինել-չլինելու խնդրի առջև, այսօր մենք ադրբեջանական ցեղասպանության հերթական թիրախն ենք: Ճակատը պինդ արցախցու համար սա հերթական փորձություն է, որը հաղթահարելու է հզոր արցախցին՝ հանուն իր նահատակների, հանուն սահմանին կանգնած իր զինվորի, հանուն այն մանուկների, որոնք կարոտ են մնացել մոր խնամքին, հոր ջերմությանը: Այսօր, երբ հարցը արցախցուն է վերաբերում, խիղճը մեռած աշխարհը լուռ է, համր է ու կույր: Նա չի խղճում այն տոկուն արցախցուն, որի երակներում գոյության կռիվն է հոսում, այն արցախցուն, որ պայքար է տալիս իր ամեն օրվա համար: Այսօր Արցախի երեսուն հազար մանուկներ հնարավորություն չունեն երազելու, փշրվել են նրանց բարի անուրջները, իսկ փշրանքները կորել են՝ վերադառնալ չխոստանալով: Շա՛տ դժվար է մեր ուղին, շա՛տ, փշոտ, բայց մենք, մեր անսահման ցավը սրտում, պայքարում ենք: Ես հպարտ եմ, որ այս սուրբ հողի մի մասնիկն եմ, կրողը, հետմորդը մեծ հաղթանակների: Մենք ամեն գնով պետք է պահենք, պաշտպանենք մեր թանկ նվաճումը՝ ազատ ու անկախ Արցախ աշխարհը: Նախնիների սխրանքով են սնվել մեր ժամանակի հերոսները, նրանց ոգին էր թևածում ազատամարտիկների գլխավերևում, երբ ինքնամոռաց նետվում էին մարտի՝ թույլ չտալով թշնամուն պղծել մեր երկիրը: Արցախի բարի ու ստեղծագործ մարդիկ ամուր կանգնած են իրենց անառիկ բերդերի ու լեռների պես: Արցախում ապրելը պատիվ է, հպարտություն:

Իմ Արցախ, դու այնքան հարազատ ես ինձ համար, այնքան սրտամոտ, որ ամեն անգամ, երբ խոսք է բացվում քո մասին, ես ակամա մոռանում եմ բոլոր դժվարությունները, խենթանում քո մայրական սքանչելի բուրմունքով: Դու, այո՛, միջնադարի մռայլ ու մութ ճանապարհներով քայլել ես առաջ, քայլել ես, հայրենիք իմ, աչքերդ լուսաշող ապագային, ու այդ լույսը երբեք չի մարել քո սրտում: Այսօր, երբ հայրենիքս վտանգված է, և ադրբեջանցին մեր տունն է ուզում, հայտարարում եմ, որ ինչքան էլ շրջափակեն մեզ, ինչքան էլ ճնշեն, մենք երբեք չենք լքի մեր հայկական հիմնավորց հողը ու չենք հուսահատվի, կանգուն կմնանք մեր հարազատ լեռնաշխարհում, կապրենք մեր տաք ժայռերի կրծքում: Մենք պատերազմ չենք ուզում, պատերազմ, որ խլում է հազարավոր մատաղ կյանքեր և աշխարհը վերածում մի սարսափելի մոխրակույտի: Պատերազմը ամենից շատ իմ Արցախին է վնաս պատճառել. գրկել է տարածքներից, որոնք իր որդիների արյան գնով է ազատագրել, կուլ է տվել իր անմեղ զինվորներին, ովքեր պայքարել են մինչև վերջին կաթիլն արյունի:

Արցախ աշխարհ, իմ տուն ու տե՛ղ, իմ կյանք ու հպարտություն, ինչքան էլ խոցի քեզ թշնամու սուրը, մեկ է, մենք կանք ու կլինենք դարեր: Արցախում ապրելը հերոսություն է: Մենք, ապրելով Արցախում, ունենք Արցախում ապրելու մեր բանաձևը:

Այո՛, մենք պայքարելու ենք մեր Արցախի համար: Արցախը մեր հոգին է, մեր ուժը: Արցախում պետք է ապրել, որ Արցախը հայկական մնա: Ձիջել Արցախը կնշանակի հրաժարվել սեփական ինքնությունից:

Իմ Արցախ, քո երկնականարը անամա է լինելու, խաղաղության աղավմիները ճռվողյունով թևածելու են քո լուրթ երկնքում: Մենք դեռ բացելու ենք մեր թևերը, վերադարձնելու ենք մեր պատիվն ու արժանապատվությունը, վերադարձնելու ենք հայ ժողովրդի ճակատագրի կրողն ու մարմնացումը, հայոց մարգարիտը համարվող Շուշին, մեր Ղազանչեցոցի խաղաղություն ու բարություն ավետող դողանջները, դեռ Դադիվանքում հնչելու է մեր զորավոր աղոթքը, դեռ ծաղկելու է մեր Հաղորութը: Պատմությունը թելադրում է թշնամու հետ հարաբերվել միայն ուժի լեզվով:

Այո՛, մենք հիմա հսկայական գործ ունենք կատարելու ցանկալի ապագայի համար: Մենք հայ ենք, մենք չենք հանձնվելու:

ԱՆՆԱ ԼԱԶԱՐՅԱՆ,

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության ուսանող